

**Request for Expressions of Interest  
(Consulting services - organization  
selection)**

**Հետաքրքրության հայտ ներկայացնելու  
հրավեր  
(Խորհրդատվական ծառայություններ-  
կազմակերպության ընտրություն)**

April 20, 2026

20 ապրիլի, 2026թ

Country: **Republic of Armenia**  
Project name: **“Promoting Green Deal Readiness  
in the Eastern Partnership Countries  
(ProGRess)”**; **“Tashir – Climate Bridge”**

Երկիր՝ **Հայաստանի Հանրապետություն**  
Ծրագրի անվանումը՝ **«Արևելյան  
գործընկերության երկրներում Կանաչ  
համաձայնագրի իրագործման  
պատրաստվածության խթանում» (ProGRess)**  
ծրագրի շրջանակներում, **«Տաշիր –  
կլիմայական կամուրջ»**

GIZ grant no. [81320025](#)

ԳՄՀԸ/GIZ դրամաշնորհ No. [81320025](#)

Name of the contract: **Study and Assessment of  
the Site of an Urban Bridge Crossing over the  
Tashir River in the City of Tashir, Preparation  
of Design and Cost Estimate Documentation  
Package, and Provision of Author’s  
Supervision;**

Պայմանագրի անվանումը՝ **ք.Տաշիրում Տաշիր  
գետի վրա քաղաքային կամրջային անցման  
տեղանքի ուսումնասիրում և գնահատում,  
նախագծանախահաշվային փաթեթի կազմում  
և հեղինակային հսկողության իրականացում**

Package number: **GIZ/ESF/CS/CQS - 2026/005**

Փաթեթի համարը՝ **GIZ/ESF/CS/CQS - 2026/005**

1. The Energy Saving Foundation has received a grant from the German Agency for International Cooperation (GIZ) under the program “Promoting Green Deal Readiness in the Eastern Partnership Countries (ProGRess)”, co-financed by the Federal Ministry for the Environment, Nature Conservation and Nuclear Safety of

1. Էներգոխնայողության աջակցման հիմնադրամը ԳՄՀԸ/GIZ-ից ստացել է դրամաշնորհ, **«Արևելյան գործընկերության երկրներում Կանաչ համաձայնագրի իրագործման պատրաստվածության խթանում» (ProGRess)** «Տաշիր – կլիմայական կամուրջ» ծրագրի ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է միջոցների մի

Germany and the European Commission, to cover the expenses of the “Tashir – Climate Bridge” project, and a portion of these funds is intended to be allocated for the procurement of the consulting services for **Study and Assessment of the Site of an Urban Bridge Crossing over the Tashir River in the City of Tashir, Preparation of Design and Cost Estimate Documentation Package, and Provision of Author’s Supervision, No. GIZ/ESF/CS/CQS - 2026/005.**

2. The Energy Saving Foundation is now inviting eligible Consultants to submit EOIs for the assignment **Study and Assessment of the Site of an Urban Bridge Crossing over the Tashir River in the City of Tashir, Preparation of Design and Cost Estimate Documentation Package, and Provision of Author’s Supervision.**
3. Interested eligible Consultants may obtain additional information at the following address: Energy Saving Foundation, RA, Yerevan, 26/1 Vazgen Sargsyan Ave., Erebuni Business Center, 4th floor, room 414, Artur Grigoryan, e-mail: Email: [artgrigoryan@yahoo.com](mailto:artgrigoryan@yahoo.com). Questions on tender documents can be clarified at the above-mentioned address, during working hours from 09.00 to 18.00.
4. Hereby, the Energy Saving Foundation ("Client") invites eligible consulting organizations ("Consultants") to submit requests of interest regarding the provision of below services. Interested Consultants must submit information on the required qualifications and relevant experience (information on the organization, experience/description of providing similar services, license to carry out bridge design, state registration certificate, contact information of the organization, etc.), in order to provide the specified services. **Attached are Annex A: Terms of**

մասն օգտագործել **No. GIZ/ESF/CS/CQS - 2026/005** պայմանագրի շրջանակներում **ք.Տաշիրում Տաշիր գետի վրա քաղաքային կամրջային անցման տեղանքի ուսումնասիրում և գնահատում, նախագծանախահաշվային փաթեթի կազմում և հեղինակային հսկողության իրականացում** խորհրդատվական ծառայությունների վճարումները կատարելու համար:

2. Էներգախնայողության աջակցման հիմնադրամը այժմ հրավիրում է իրավասու խորհրդատուներին ներկայացնել հետաքրքրության հայտեր **ք.Տաշիրում Տաշիր գետի վրա քաղաքային կամրջային անցման տեղանքի ուսումնասիրում և գնահատում, նախագծանախահաշվային փաթեթի կազմում և հեղինակային հսկողության իրականացում** ծրագրի իրականացման համար:
3. Հետաքրքրված իրավասու հայտատուները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ հետևյալ հասցեով. Էներգախնայողության Հիմնադրամ, ՀՀ, ք. Երևան, 26/1 Վազգեն Սարգսյան պող., Էրեբունի բինես կենտրոն 4-րդ հարկ, 414 սենյակ, Արթուր Գրիգորյան, էլ. փոստ՝ [artgrigoryan@yahoo.com](mailto:artgrigoryan@yahoo.com): Մրցույթային փաստաթղթերի մասին հարցերը կարող են պարզաբանվել վերոնշյալ հասցեով, աշխատանքային ժամերի ընթացքում՝ 09.00-ից մինչև 18.00:
4. Սույնով Էներգախնայողության Աջակցման Հիմնադրամը («Պատվիրատու») հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին («Խորհրդատուներ») ներկայացնել հետաքրքրության հայտեր ստորև նշված ծառայությունների մատուցման վերաբերյալ: Նշված ծառայությունները տրամադրելու նպատակով շահագրգիռ Խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկատվություն պահանջվող որակավորման և համապատասխան փորձի վերաբերյալ (կազմակերպության

**Reference and Annex B: Consultant's Experience Table.**

5. Qualification criteria are:
  - General work experience of the Consultant (years) in the field of structural design – 10 points;
  - General work experience of the Consultant (number of implemented contracts) in the field of structural design over the last 5 years – 30 points;
  - Implementation of similar contracts over the last 5 years, within which the organization has carried out design works for at least 3 bridges (overpasses, viaducts) – 60 points.
6. The procurement will be carried out in accordance with the procurement procedure of the World Bank, using the "Company's Qualification-based selection" (CQS) method.
7. Consulting companies can cooperate with each other, in order to improve their qualifications. In this case, it is necessary to clearly indicate the form of cooperation: Joint Venture (JV) and/or sub-consultant. During the entire implementation of the contract, all members of the JV have joint responsibility, in case of being selected.
8. For more information, feel free to contact the address below on working days from 09:00 to 18:00. Below are the contact details.

մասին տեղեկատվություն, նմանատիպ ծառայությունների տրամադրման փորձ/նկարագրություն, կամուրջների նախագծման լիցենզիա, պետական գրանցման վկայական, կազմակերպության կոնտակտային տվյալները և այլն): **Կից կարող եք տեսնել Հավելվալ Ա՝ Տեխնիկական առաջադրանքը և Հավելված Բ՝ Խորհրդատուի փորձի ներկայացման աղյուսակը:**

5. Որակավորման չափանիշներն են՝
  - Խորհրդատուի ընդհանուր աշխատանքային փորձը (տարիներով) կառույցների նախագծման աշխատանքների ոլորտում՝ 10 միավոր;
  - Վերջին 5 տարիների ընթացքում կառույցների նախագծման աշխատանքների ոլորտում Խորհրդատուի իրականացրած պայմանագրերի քանակը՝ 30 միավոր;
  - Վերջին 5 տարիների ընթացքում նմանատիպ պայմանագրերի իրականացում, որոնց շրջանակներում կազմակերպությունը իրականացրել է առնվազն 3 կամրջի (ուղեանցի, էստակադայի) նախագծման աշխատանքներ՝ 60 միավոր:
6. Գնումն իրականացվելու է Համաշխարհային Բանկի գնումների ընթացակարգով, «Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն» (CQS) մեթոդի կիրառմամբ:
7. Խորհրդատու ընկերությունները կարող են համագործակցել միմյանց հետ՝ իրենց որակավորումը բարձրացնելու նպատակով: Այս դեպքում անհրաժեշտ է հստակ նշել համագործակցության ձևը՝ **Համատեղ ձեռնարկատիրական գործունեություն (ՀՁԳ) և/կամ ենթախորհրդատու:** Պայմանագրի ողջ իրականացման ընթացքում ՀՁԳ բոլոր անդամները համապարտ պատասխանատվություն են կրում, եթե վերջիններս ընտրվեն:
8. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ստորև նշված հասցեով աշխատանքային օրերին՝ 09:00-ից մինչև 18:00 ընկած

9. Expression for interest must be submitted in **Armenian**, electronically, to the address below, no later than **May 20, 2026, at 3:00 p.m.** The Expression for interest must clearly state **Investigation of the condition of the urban bridge crossing over the Tashir River in Tashir city; GIZ/ESF/CS/CQS - 2026/005.**

ժամանակահատվածում: Ստորև բերված են կոնտակտային տվյալները:  
9. Հետաքրքրության հայտը պետք է ներկայացվի **հայերեն**, էլեկտրոնային տարբերակով՝ ստորև նշված հասցեով, ոչ ուշ քան **2026թ-ի մայիսի 20-ը, ժամը 15:00:** Հետաքրքրության հայտում պետք է հստակ նշված լինի **ք.Տաշիրում Տաշիր գետի վրա քաղաքային կամրջային անցման վիճակի հետազննում; GIZ/ESF/CS/CQS - 2026/005:**

**The above-mentioned address is:**

**Client:** Energy Saving Foundation

**Authorized representative:** Ms. Astghine Pasoyan, Executive Director

**Address:** RA, c. Yerevan, 26/1 Vazgen Sargsyan Ave., Erebuni Business Center 4th floor, room 414

**Phone:** +374 93 61 16 19;

**Email:** [apasoyan@esfarmeria.org](mailto:apasoyan@esfarmeria.org)

Sincerely,



Astghine Pasoyan  
Executive director

**Վերոնշյալ հասցեն է՝**

**Պատվիրատու՝** Էներգասնայողության Աջակցության Հիմնադրամ  
**Լիազորված ներկայացուցիչ՝** տկն. Աստղինե Պասոյան, Գործադիր տնօրեն

**Հասցե՝** ՀՀ, ք. Երևան, 26/1 Վազգեն Սարգսյան պող., Էրեբունի բինես կենտրոն 4-րդ հարկ, 414 սենյակ

**Հեռ.՝** +374 93 61 16 19;

**Էլ. փոստ՝** [apasoyan@esfarmeria.org](mailto:apasoyan@esfarmeria.org)

Հարգանքով՝



Աստղինե Պասոյան  
Գործադիր տնօրեն

**Terms of Reference**  
**Study and Assessment of the Site of an Urban**  
**Bridge Crossing over the Tashir River in the**  
**City of Tashir, Preparation of Design and Cost**  
**Estimate Documentation Package, and**  
**Provision of Author’s Supervision**  
**GIZ/ESF/CS/CQS - 2026/005**

**Տեխնիկական առաջադրանք**  
**ք.Տաշիրում Տաշիր գետի վրա քաղաքային**  
**կամրջային անցման տեղանքի**  
**ուսումնասիրում և գնահատում,**  
**նախագծանախահաշվային փաթեթի կազմում**  
**և հեղինակային հսկողության իրականացում**  
**GIZ/ESF/CS/CQS - 2026/005**

**PROJECT BACKGROUND**

On May 26, 2024, sudden and intense floods caused by heavy rainfall led to the overflow of the Tashir River, resulting in catastrophic consequences for approximately 30,000 residents across 15 villages. The floods destroyed bridges, roads, and residential houses, depriving communities of access to water supply, electricity, and essential services. In Tashir, more than 9,700 residents were directly affected, 150 private houses and 12 apartments were damaged or completely destroyed, the floodwaters washed away 11 vehicular and 13 pedestrian bridges, while the loss of 2,400 hectares of agricultural land and livestock destroyed people’s main livelihoods.

The disaster exposed the region’s high vulnerability to climate change and the need of creating of resilient infrastructure. As a significant portion of the population was already below the poverty threshold, the event further exacerbated socio-economic challenges. Although state recovery measures have addressed urgent needs, systemic vulnerabilities remain, highlighting the urgency of climate adaptation measures.

The Energy Saving Foundation has received a grant from the EU4 Climate Resilience - Decarbonization and Climate Resilience in the Eastern Partnership Countries (a project jointly co-funded by the European Union and the German Federal Ministry for the Environment, Climate Action, Nature Conservation and Nuclear Safety (BMUKN)), to cover the expenses of the “Tashir – Climate Bridge” project, and a portion of these funds is intended to be allocated for the restoration of riverbank and the procurement of climate resilience baseline diagnostic assessment services.

**ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

2024 թվականի մայիսի 26-ին հորդառատ տեղումներից առաջացած հանկարծակի ուժեղ հեղեղումները պատճառ դարձան Տաշիր գետի վարարման, որը աղետալի հետևանք ունեցավ 15 գյուղերի շուրջ 30,000 բնակչի համար: Հեղեղումները քանդեցին կամուրջներ, ճանապարհներ և բնակելի տներ՝ համայնքները զրկելով ջրամատակարարման, էլեկտրամատակարարման և կենսական նշանակության ծառայությունների հասանելիությունից: Տաշիրում ուղղակիորեն տուժել է ավելի քան 9,700 բնակիչ, վնասվել կամ ամբողջությամբ ավերվել է 15 առանձնատուն և 12 բնակարան, ջրի հոսանքը տարել է 11 ավտոմոբիլային և 13 հետիոտնային կամուրջ, իսկ 2,400 հա գյուղատնտեսական հողատարածքների լվացման և անասունների կորուստների հետևանքով ոչնչացվել են մարդկանց ապրուստի հիմնական միջոցները:

Աղետը բացահայտեց տարածաշրջանի խիստ խոցելիությունը կլիմայի փոփոխության նկատմամբ և դիմակայուն ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտությունը: Քանի որ բնակչության զգալի մասը արդեն գտնվում է աղքատության նվազագույն շեմից ցածր, տեղի ունեցածը խորացրեց սոցիալ-տնտեսական դժվարությունները: Թեև պետական վերականգնողական միջոցառումներն ուղղված են եղել անհետաձգելի կարիքների լուծմանը, համակարգային խոցելիությունները շարունակում են պահպանվել՝ ընդգծելով կլիմայի հարմարվողականության միջոցառումների հրատապությունը:

Էներգախնայողության աջակցման հիմնադրամը դրամաշնորհ է ստացել «Արևելյան

EU4ClimateResilience - Decarbonization and Climate Resilience in the Eastern Partnership Countries (a project jointly co-funded by the European Union and the German Federal Ministry for the Environment, Climate Action, Nature Conservation and Nuclear Safety (BMUKN))

The project aims to restore the Tashir River and its infrastructure to enhance community resilience and climate adaptation. It seeks to combine **engineering, ecological, and nature-based solutions** to stabilize the riverbed and flood-prone areas while delivering co-benefits for livelihoods, biodiversity, and tourism. A pilot **cost-effective, nature-based approach** (e.g., gabion stone reinforcements, bank stabilization) is planned to reinforce up to **200 meters of riverbank and one bridge** (up to 200 m<sup>2</sup> construction impact area). These pilot interventions will serve as model solutions for large-scale restoration of risky riverbed systems with natural solutions in the region.

The project will also link climate resilience with local sustainable development. By improving access to the riverbank and integrating recreational and tourism elements, the project will make Tashir a more attractive eco- and cultural tourism destination. Hiking trails, small visitor infrastructure, and community-led events will showcase the region's natural beauty and cultural heritage, supporting sustainable income generation.

The restoration of the riverbed with natural solutions will function as **living infrastructure**, maintaining ecological balance, while accompanying cultural and tourism initiatives will contribute to economic resilience and enhance the community's profile.

Finally, the project will strengthen disaster preparedness especially to floodings by providing training, early warning systems, and evacuation planning to better prepare communities for future extreme weather events.

գործընկերության և երկրներում  
դեկարբոնիզացիայի և կլիմայի  
դիմակայունության» (EU4ClimateResilience)  
ծրագրի շրջանակներում, որը  
համաֆինանսավորվում է ստեղծման  
անհրաժեշտությունը և Եվրոպական  
հանձնաժողովի կողմից՝ «Տաշիր - կլիմայական  
կամուրջ» ծրագրի ծախսերը հոգալու համար: Այն  
նպատակ ունի միջոցների մի մասն ուղղել Տաշիր  
գետի կամրջի վերանորոգման, գետափերի բնահեն  
լուծումներով վերականգնման և կլիմայական  
դիմակայունության բազային դիագնոստիկ  
գնահատման ծառայությունների գնումների  
իրականացմանը:

Ծրագրի նպատակն է բնահեն լուծումներով  
վերականգնել Տաշիր գետի հիմնական կամուրջը  
և առափնյա հատվածները, որպեսզի բարձրացնի  
գետամերձ համայնքների դիմակայունությունը և  
կլիմայի փոփոխության նկատմամբ  
հարմարվողականությունը: Այն միտված է  
համատեղելու **ինժեներական, էկոլոգիական և  
բնահեն լուծումները**, ամրապնդելու գետի հունը  
և հեղեղման ենթակա տարածքները,  
միաժամանակ ապահովելով համակցված  
օգուտներ ապրուստի միջոցների,  
կենսաբազմազանության և զբոսաշրջության  
համար: Նախատեսվում է կիրառել պիլոտային  
**ծախսարդյունավետ, բնահեն մոտեցում**  
(օրինակ՝ գաբիոնային քարային ամրացումներ,  
ափերի կայունացում)՝ մինչև **200 մ  
երկարությամբ գետի ափի հատվածի և մեկ  
կամրջի** (մինչև 200 մ<sup>2</sup> շինարարական  
ազդեցության տարածք) ամրացման նպատակով:  
Այս պիլոտային միջոցառումները կծառայեն  
որպես օրինակելի մոդելներ տարածաշրջանի  
գետային համակարգերի ռիսկային հունային  
հատվածների լայնածավալ վերականգնման  
համար:

Ծրագիրը նաև կկապի կլիմայական  
դիմակայունությունը տեղական կայուն  
զարգացման օրակարգի հետ: Գետի ափին  
հասանելիության բարելավման, ինչպես նաև  
հանգստի և զբոսաշրջային տարրերի ինտեգրման  
շնորհիվ ծրագիրը Տաշիրը կդարձնի ավելի գրավիչ  
էկո- և մշակութային զբոսաշրջության  
ուղղություն: Քայլարշավային արահետները,  
փոքր այցելուների ենթակառուցվածքները և

համայնքի կողմից կազմակերպվող միջոցառումները կներկայացնեն տարածաշրջանի բնական գեղեցկությունն ու մշակութային ժառանգությունը՝ աջակցելով կայուն եկամտի ձևավորմանը:

Գետի հունի ափերի բնահեն վերականգնումը հանդես կգա որպես **կենդանի ենթակառուցվածք**՝ պահպանելով էկոլոգիական հավասարակշռությունը, իսկ ուղեկցող մշակութային և զբոսաշրջային նախաձեռնությունները կնպաստեն տնտեսական դիմակայունությանը և համայնքային հեղինակության բարձրացմանը:

Վերջապես, ծրագիրը կուժեղացնի բնական աղետների, հատկապես ջրհեղեղների դիմակայունությանը՝ ապահովելով ուսուցում, վաղ նախագուշացման համակարգեր և տարհանման պլանավորում, որպեսզի համայնքները ավելի լավ պատրաստ լինեն ապագա ծայրահեղ եղանակային երևույթերին:

## OBJECTIVE OF THE ASSIGNMENT

### Introduction

The main goal of the project is to develop solutions for the resilience of the urban bridge crossing and riverbank sections over the Tashir River in the city of Tashir within the framework of the EU4ClimateResilience project ("Tashir - Climate Bridge" GIZ grant No. 81320025).

Within the project, an assessment of the condition of the bridge crossing has been conducted and a specialized conclusion has been developed. A baseline diagnostic assessment of the Tashir River, its riverbed, and adjacent riverine and terrestrial habitats has also been initiated.

**The objective of this assignment** is to develop a **complete design and cost estimate documentation package** for the urban bridge crossing, including:

1. Engineering-geological and geodetic surveys of the bridge area
2. Development of design alternatives

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿ

### Ներածություն

Ծրագրի հիմնական նպատակն է EU4ClimateResilience ծրագրի շրջանակներում («Տաշիր – կլիմայական կամուրջ» ԳՄՀԸ/GIZ դրամաշնորհի No.81320025) մշակել լուծումներ Տաշիր քաղաքում Տաշիր գետի վրա քաղաքային կամրջային անցման և գետափնյա հատվածների դիմակայունության համար:

Այդ նպատակով Ծրագրի շրջանակներում իրականացվել է Տաշիր գետի վրա քաղաքային կամրջային անցման վիճակի հետազննում, մշակվել է համապատասխան մասնագիտական եզրակացություն: Ծրագրի շրջանակներում նախաձեռնվել է նաև Տաշիր գետի և հունի, ինչպես նաև հարակից գետափնյա և ցամաքային կենսավայրերի բազային դիագնոստիկ գնահատում:

**Առաջադրանքի նպատակն** է մշակել Տաշիր քաղաքում Տաշիր գետի վրա քաղաքային կամրջային անցման համար **լիարժեք նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթ**, որը ներառում է.

3. Detailed working design, including construction organization scheme, construction cost estimate.

1. կամրջին կից տարածքի ինժեներատեխնիկական, գեոդեզիական հետազննումներ
2. նախագծային այլընտրանքների մշակում
3. մանրամասն աշխատանքային նախագիծ, ներառյալ շինարարական աշխատանքների կազմակերպման սխեման
4. շինարարական աշխատանքների նախահաշիվ

## SCOPE OF SERVICES

The design and cost estimate documentation package (DCEDP) shall be developed in the territory of the Republic of Armenia in accordance with applicable construction norms, technical standards, and other regulatory documents:

- Bridge design must comply with RA Construction Norms RABC 20.04-2020, RABC 32-03.01-2024, and RABC 32-03.02-2024.
- Geological and site investigations must comply with RABC I-2.01-99 “Engineering surveys for construction, main clauses”, SNIP manuals 1-2.101-2002 “Engineering-geological surveys for construction” and I-2.102-2005 “Engineering-geodetic surveys”. At the same time, the requirements of the norms of RABC 22-02.01-2023 "Engineering protection of territories, buildings and structures from geological hazards" must be taken into account.

The DCEDP shall include final technical and financial proposals developed through discussions and analyses, acceptable to the Client and agreed with stakeholders.

The Client will provide the bridge condition assessment report prepared in 2025.

The assignment will be implemented in **3 (three)** phases:

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐՋԱՆԱԿ

Նախագծանախահաշիվային փաթեթը (ՆՏՓ-ն) պետք է մշակվի ՀՀ-ի տարածքում ծրագրի իրականացման ընթացքում և համապատասխան շինարարական աշխատանքների համար գործող նորմատիվ, տեխնիկական և այլ փաստաթղթերի հիման վրա՝

- Կամրջի նախագծման համար պետք է կիրառվեն ՀՀՇՆ 20.04-2020, ՀՀՇՆ 32-03.01-2024 և ՀՀՇՆ 32-03.02-2024 նորմերի պահանջները:
- Երկրաբանական և տեղանքի զննման համար պետք է կիրառվեն ՀՀՇՆ I-2.01-99 «Ինժեներական հետազննություններ շինարարության համար. Հիմնական դրույթներ» նորմերը, ԾՆՁ 1-2.101-2002 «Ինժեներատեխնիկական հետազննություններ շինարարության համար» և ԾՆՁ I-2.102-2005 «Ինժեներագեոդեզիական հետազննություններ» ձեռնարկների պահանջները: Միաժամանակ պետք է հաշվի առնվեն ՀՀՇՆ 22-02.01-2023 «Տարածքների, շենքերի և շինությունների ինժեներական պաշտպանությունը երկրաբանական վտանգավոր երևույթներից» նորմերի պահանջները:

ՆՏՓ-ն պետք է ներառի տեխնիկական և ֆինանսական առաջարկների վերջնական տարբերակները, որոնք պատրաստվել են քննարկումների և վերլուծությունների արդյունքում, և դրանք պետք է ընդունելի լինեն Պատվիրատուի մասնագետների կողմից և համաձայնեցվեն շահագրգիռ կազմակերպությունների և շահառուների հետ:

Աշխատանքների իրականացման համար Պատվիրատուի կողմից ներկայացվելու է 2025 թվականին կատարված կամրջի տեխնիկական վիճակի հետազննման հաշվետվությունը: Աշխատանքները պետք է իրականացվեն **3 (երեք) փուլով**.

**Phase One**  
**Development of Preliminary Design Solutions**

1. Engineering-geodetic survey, based on instrumentation,
2. Geological investigations of the bridge area,
3. Collection of required data and documentation,
4. Preparation and submission of developed proposals and descriptions including preliminary construction cost estimates.

**Phase Two**  
**Development of DCEDP**

1. Preparation of calculations for the structures and other elements of the selected option, as well as preparation of a report on the performed calculations;
2. Development of working drawings and the explanatory section;
3. Preparation of bills of quantities, which shall reflect the volumes of construction works envisaged by the design, including auxiliary works, temporary structures, and roads;
4. Preparation of the construction cost estimate (the cost estimate shall be developed using the methodology adopted by the RA Urban Development State Committee);
5. Preparation of construction organization schemes;
6. Provision of the construction works implementation schedule;
7. Preparation of technical specifications for the procurement of construction works;

**Փուլ մեկ**  
**Նախնական նախագծային լուծումների մշակում**

1. Ինժեներական գեոդեզիական զննում գործիքաչափության հիման վրա;
2. Կամրջի տարածքի երկրաբանական հետազոտություններ;
3. Անհրաժեշտ փաստաթղթերի և տվյալների հավաքագրում, և ;
4. Առաջարկների և նկարագրության մշակում և տրամադրում Պատվիրատուի դիտարկմանը, ներառյալ նախնական շինարարական գնահաշվարկները:

**Փուլ երկու**  
**ՆՆՓ մշակում**

1. Ընդունված տարբերակի կոնստրուկցիաների, այլ տարրերի հաշվարկներ և կատարված հաշվարկների հաշվետվության պատրաստում;
2. Աշխատանքային գծագրերի և բացատրական մասի մշակում;
3. Ծավալաթերթերի պատրաստում, որոնք պատկերելու են նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ծավալները, ներառյալ օժանդակ աշխատանքներ, ժամանակավոր կառույցներ և ճանապարհներ;
4. Շինարարական աշխատանքների նախահաշվի պատրաստում, (նախահաշիվը պետք է մշակվի ՀՀ Քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ընդունված մեթոդաբանության կիրառմամբ);
5. Շինարարական աշխատանքների կազմակերպման սխեմաների պատրաստում;

8. Obtaining the Client's approval for each step of this Phase.

6. Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույցի տրամադրում;

7. Տեխնիկական մասնագրերի պատրաստում շինարարական աշխատանքների գնումների համար;

8. Պատվիրատուի համաձայնության ստացում այս Փուլի յուրաքանչյուր գործառույթի մասով:

**Phase Three**  
**Author's Supervision**

1. To carry out Author's supervision during construction works in accordance with the Decree No. N-143 of RA Minister of Urban Development (dated 28.09.1998),
2. To verify, identify, and record the overall compliance of the actual construction works with the approved designs, as well as to bear responsibility for deviations identified in the technical design during construction,
3. To perform necessary design adjustments in case of deviations from the approved technical design during the implementation of actual construction works.

**Փուլ երեք**  
**Հեղինակային հսկողություն**

1. Շինարարական աշխատանքների ընթացքում իրականացնել Հեղինակային հսկողություն՝ համաձայն ՀՀ Քաղաքաշինության նախարարի թիվ Ն-143 որոշման (28.09.1998թ.):

2. Ստուգել, հայտնաբերել, արձանագրել փաստացի շինարարական աշխատանքների ընդհանուր համապատասխանությունը հաստատված նախագծերի հետ, ինչպես նաև պատասխանատվություն կրել այն շեղումների մասով, որոնք հայտնաբերվել են տեխնիկական նախագծում շինարարության ընթացքում;

3. Կատարել անհրաժեշտ նախագծային ճշգրտումներ փաստացի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հաստատված տեխնիկական նախագծից շեղումների դեպքում:

**KEY TASKS OF THE CONSULTANT**

The main tasks to be carried out by the Consultant and the expected interim results after completion of each phase are as follows:

**ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ**

Խորհրդատուի կողմից իրականացվող հիմնական առաջադրանքները և յուրաքանչյուր փուլի ավարտից հետո ակնկալվող միջանկյալ արդյունքները հետևյալն են.

**Phase One**  
**Development of Preliminary Design Solutions**

The scope of work includes:

**Առաջին փուլ**  
**Նախնական նախագծային լուծումների մշակում**

Աշխատանքների շրջանակը ներառում է.

a. Study of the geodetic survey carried out during the bridge inspection provided by the Client, and, if necessary, its clarification and supplementation.

In accordance with cadaster and land ownership documents, the Consultant shall:

- i. Verify land boundaries and ownership of the areas required for the implementation of the proposed construction works, including auxiliary structures and access roads,
- ii. Carry out clarification of the geodetic survey of the area.

b. Geological investigation

The investigation shall include the following aspects:

- i. Determine the physical and mechanical characteristics of the soils serving as the foundation base for the supports (including granulometric composition of soil),
- ii. Prepare the geological passport of the bridge, including the aggressiveness of water towards cement,
- iii. Check the condition and levels of groundwater,
- iii. Record the freezing depth,
- iv. Describe geological hazards, including:
  - Landslides
  - Flooding and erosion
  - Soil condition (expansive, compressible, or aggressive soils)
  - Initial soil cracking
  - Seismic zoning
  - Soil liquefaction (if applicable in the region)
- v. Carry out a hydraulic investigation of the Tashir River, during which the 1% and 2% expected design flows, water velocity, and water levels for the

ա. Պատվիրատուի կողմից տրամադրված կամրջի հետազննման ընթացքում կատարված գեոդեզիական հանույթի տվյալների ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում դրանց ճշգրտում և լրացում,

Կադաստրի և հողի սեփականության իրավունքների փաստաթղթերի համաձայն՝ Խորհրդատուն պետք է.

- vi. Իրականացնի նախատեսվող շինարարական աշխատանքների, այդ թվում՝ օժանդակ կոնստրուկցիաների և մոտեցնող ճանապարհների իրականացման համար անհրաժեշտ տարածքների հողերի սահմանների (կողմնորոշումների) և սեփականության իրավունքի ստուգում;
- vii. Իրականացնի տարածքի գեոդեզիական հետազոտության ճշգրտումներ:

բ. Երկրաբանական հետազոտություն

Հետազոտությունը պետք է ընդգրկի հետևյալ ասպեկտները.

- i. Որոշի հենարանների համար հիմնատակ ծառայող գրունտերի ֆիզիկա-մեխանիկական բնութագրերը (ներառյալ՝ գրունտերի հատիկաչափական կազմը);
- ii. Կազմի կամրջի երկրաբանական անձնագիրը, ներառյալ ջրի՝ ցեմենտի հանդեպ ագրեսիվությունը;
- iii. Ստուգի ստորգետնյա ջրերի վիճակը և մակարդակները,
- viii. Ֆիքսի սառչելու խորությունը;
- ix. Նկարագրի երկրաբանական վտանգները, այդ թվում՝
  - Սողանքներ
  - Հեղեղում և էրոզիա

indicated flows along the river cross-sections shall be determined.

c. Study of engineering networks passing over the bridge, including:

- i. Study the presence, location, and technical characteristics of all underground and above-ground engineering networks within the boundaries of the bridge crossing and the future construction area;
- ii. If necessary, develop designs and bills of quantities for the relocation of engineering networks,
- iii. Coordinate relocation designs with network owners and obtain the relevant technical specifications for connections (the Client will support obtaining these specifications and permits), and ensure acquisition of the required technical conditions.

The Consultant shall:

1. Submit to the Client for approval a detailed work plan and the list of RA construction norms and standards to be used during the design within 1 (one) week after signing the Contract.
2. Collect, study, and analyze data and results of previously conducted investigations, as necessary.
3. Develop preliminary schemes for possible rehabilitation of the existing bridge crossing (at least 2 alternative options, preferably including 3 variants in terms of appearance) to provide technically and economically feasible/justified solutions to existing problems, including ensuring accessibility for persons with limited mobility.
  - Include in the options technical solutions for energy efficiency and renewable energy for street lighting

- Հողի վիճակը (ծավալվող, սեղմելի կամ ագրեսիվ հող)
- Հողի նախնական ճեղքում
- Մեյսմիկ գոտիավորում
- Գրունտի ջրիկացում (եթե կիրառելի է տարածաշրջանում)

x. Կատարի Տաշիր գետի հիդրավիկական հետազննում, որի ընթացքում պետք է որոշել գետի 1%, 2% սպասվող հաշվարկային ելքերը, ջրի արագությունը, նշված հնարավոր ելքերի համար գետի ջրի հորիզոնները գետի կենդանի հատվածքների վրա:

գ. Կամրջի վրայով անցնող ինժեներական ցանցերի ուսումնասիրություն, այդ թվում՝

- i. ուսումնասիրի կամրջային անցման և ապագա շինարարության սահմաններում գտնվող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական բոլոր ցանցերի առկայությունը, նրանց տեղադիրքը և տեխնիկական բնութագրերը,
- ii. անհրաժեշտության դեպքում մշակի ինժեներական ցանցերի տեղափոխման նախագծեր և ծավալաթերթեր,
- iii. համաձայնացնի տեղափոխման նախագծերը ցանցերի սեփականատերերի հետ և ստանա միացումների համապատասխան տեխնիկական բնութագրեր (Պատվիրատուն աջակցելու է այդ բնութագրերի և թույլտվությունների ստացմանը), ապահովի անհրաժեշտ տեխնիկական պայմանների ձեռք բերումը:

Խորհրդատուն պարտավորվում է.

1. Պատվիրատուի հաստատման ներկայացնել մանրամասն աշխատանքային պլանը և Նախագծման ընթացքում օգտագործվելիք ՀՀ շինարարական նորմերի և

as well as architectural and landscape lighting.

- Ensure aesthetic attractiveness of the bridge in the options to promote tourism in the community.
  - Present to the Client preliminary technical and financial assessments, including a comprehensive (technical, economic) analysis of each option to determine the preferred alternative.
